Է. ՏԱՐԻ ՇԱԲԱԹ 21 ՕԳՈՍՏՈՍ 1904 ԹԻՒ 646

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 տլր.
Վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեք անգամէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կ՚ըլլայ:
Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ „Шаржумъ" Варна

Redaction du journal „Charjoum" Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռքէ
)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեռքէ
)(15 ՍԱՆԹԻՄ)(
—o—
Դրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ» Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՊԱՐՏՔԻ ՀԵՐՈՍԸ
(ԾԻՀԱՆ ՇԱՀՊԱԶ)

Շուրջ տարի մըն է անցեր այն օրէն երբ հեռագիրներ մէկը միւսի ետեւէն կը գուժէին Կարսի մէջ օգս. 29ին արիւնամարտային պայքարի զոհ եղող պարտքի հերոսներու ոչնչացումը: Տարեդարձը և անոնց քաղցր յիշատակը չէ կարելի չը յիշել անձնուէրներու անկեղծ նուիրումը յեղափոխական գործին. Հինգ անձնուէր տղաքներ որոնք ով գիտէ եթէ յաջողէին իրենց ձեռնարկած գործին, այսօր ինչ գործեր պետի կատարէին այս ճգնաժամային օրերուն, դժբաղդաբար հինգ կորիճներու միայն մէկն է որ սերտ կապով մը կապուած էր ինձ հետ. շարունակ կը յիշէր զիս, անպակաս ըրած էր իր նամակները իր հասած տեղէն այդ. մէկի անունն է Յովհաննէս Նահիկեան, Ծիհան Շահպազ «Շարժում»ի երբեմնի թղթակից Ամերիկայի Քանկրդ քաղաքէն. Դեռ թարմ յիշատակը խղճիս վրայ պարտք մը կը ծանրացունէ համառօտ կենսագրական մը ընել Ծիհանի անկեղծ և անձնուէր գործունէութեան մասին. Ծիհանը ծնած է 1878ին Խարբերդ Հիւսէյնիկ գիւղը, Ամերիկայ եկած է 96ի սկիզբները, Ամերիկայի գործիչ Տիգրան Վահանեանը օծած է զինքը դաշնակցական 1897ին Քանկրտի մէջ, անկէ ասդին մտերմացայ Ծիհանի հետ իր առնական դէմքը, փայլակող աչքերը. ու իր տոկուն կամքը, հասուն ու առողջ համոզմունքները շատ մեծ ապագայ կը խոստանային. Յեղափոխական եռանդը օր օրին կը կրկնապատկուէր իր սրտին մէջ. ընկերական ճոխ շրջանակէ զուրկ էր. Ամերիկայի խուլ անկիւններու մէկին մէջ գաղութով հալ ու մաշ կըլլար. «Չըկայ հող որ վարեմ ու ցանեմ» կըսէր. Երբ ուրիշ քաղաքներ ընկերներու այցելութիւն կուտար ալ ետ վերադառնալ չէր ուզեր. Եկաւ օր մը որ անբաղդը Ծիհան հաստատուեցաւ զանազան գաղութներու շուրջը և սկսաւ իր միւսի մանգաղը ձեռք առնել, մտաւ ժողովրդի խաւերուն մէջ անդուլ պրոպականդիստ մը եղաւ. Նոտ մը կոմիտէներէ հրաւիրագրեր կերթային որպէսզի երթայ և խօսի հրապարակային ժողովներու մէջ. Բայց այդ բաւական չէր, որուն պահանջը զինքը անհանգիստ ըրած էր. «Տառապանքի երկիրը. հո՛ն, հո՛ն, հոն պէտք է երթամ» կըսէր. Անցեալ տարի երբ Մուշ Սասուն պաշարման գրութեան մէջ էր, այսպէս կը գրէր. «Սիրելի... ո՞ր օրուայ համար պիտի պահեմ իմ կեանքը երբ անգին պահանջ կայ. չէ՛, չեմ դաւաճաներ իմ դաւանած գաղափարներս. կռուի խուլ կոչը զիս հանգիստ չը թողուր. յեղափոխական պահանջը անձնական հանգիստէ շատ աւելի բարձր ու նուիրական է. ալ իմ վերջնական որոշումս է երթալ հոն տառապանքի ու արիւնի երկիրը ուր գործ կայ և գործողի պահանջ»: Վերջնական որոշման օրը 903 յուլիս 9ին տաք համբոյրներու և ճնաք բարեւի տպաւորութեան տակ հրաժեշտի ողջոյնները կուտար իր ընկերներուն. Բայց բաղդը չը ժպտեցաւ իրեն. որչափ կը սիրէր հայրենի հողին վրայ զէնքը ձեռքը կըռուելով իյնալ. քանի որ անարգ պատահարը եկաւ ու խորտակեց իր սիրուն գաղափարները և իր թանկագին կեանքը. Անբաղդ էր Ծիհանը և «անբաղդ» մեռաւ. Ծիհան և դուք Վարդան, Իսազան, Պօղոս, Սարգիս. Ձեր անշուք և անյիշատակ գերեզմանին առջեւ Ձեզ հետ և Ձեր ետեւէն ուխտած ընկերները ծունկ չոքելով Ձեր պաշտելի շիրիմներու առաջ, Ձեր փայփայած ու սիրած սկզբունքները աւելի եռանդով յառաջ պիտի տանին, թող հանգիստ ըլլայ Ձեր ոսկորները թանկագին ու պաշտելի նահատակներ.

Լ. Մարտիկեան

1904 օգ. 15
Ամերիկա

ՍԱՍՈՒՆԻ ԿՌԻՒՆԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ

—()o()—

Ժ.

Անդրանիկը եւ մեր ցեցերը

Դէպի 1902 թուականը մեր ընելիք սասունի պահուն՝ մեր առջեւ կը կանգնի հոյակապ դէպք մը —հետաքրքրական և հրահանգիչ մանաւանդ իր յարակից պարագաներովը— որուն առջեւ կ՚արժէ որ կանգ առնենք «Առաքելոց վանքի գրաւումն» է ատի...

Վերյիշենք զայն գոնէ թեթեւ մը. Երբ 1901ի Սասունի պաշարումը թուլցաւ Անդրանիկ 35 հոգիէ բաղկացած խումբով մը գրաւեց Առաքելոց վանքը նոյեմբեր 20ին. Գրաւումը տեւեց 19 օրէ աւելի. Մէհմէտ Ալի փաշա 1200 զօրքով պաշարեց վանքը.

Բանակցելու համար շատ մը ապարդիւն փորձեր եղան, վանահայրը երեք անգամ անձամբ եկաւ, Պէհրիկեան Թրքասէրը նամակներ գրեց, բայց ապարդիւն: Մինչեւ որ կառավարութիւնը ստիպուեցաւ Անդրանիկի ոտքը ղրկել Պէհրիկեան վարդապետը երկու գոմիսէր և ուրիշ անձեր.

Վարդապետը և անոր հետ եկողները նախ յեղափոխականներուն կողմէ վանքին մէջ տեղ մը կը փակուին, և ետքը Անդրանիկ կը ներկայանայ անոնց, իր վրայ կրելով Մէճիտիյէի պատուանշանը՝ զոր առած էր Անդրանիկ իր իսկ ձեռքով սպաննուած Խալիլ Պէյէն, որ Հեթինկի, Սպաղանքի և Շուշնամերկի կոտորածներուն հեղինակներէն էր:

Եւ Անդրանիկ յայտնելով իր ոտքը եկող պատուիրակներուն հայերու կրած տառապանքները և իրենց պարտականութիւնը, յայտարարեց որ —իրենք անձնատուր կ՚ըլլան, եթէ երկրի հայերու ապահովութիւնը երաշխաւորուի:

Ու իմանալով կառավարութիւնը ասոր յօժարութիւնը, մինչդեռ կը պատրաստուի երկրորդ պատուիրակութիւն մըն ալ ղրկել, և ահա՛ դեկտեմբեր 9ին Անդրանիկի խումբը պաշարող 1200 զօրքերու շղթան կարելով կ՚անցնի կը քալէ երկու զոհ տալով, երկու զոհ խլելով.

Ասի Անդրանիկի կողմէ խելացի և խիկական ցոյց մըն էր, ինչպէս Պանքայի հոյակապ գործը, որոնց պէս ցոյցեր —իրարմէ առաւել կամ նուազ յաջողութիւնով— մեր յեղափոխական կեանքին մէջ հազիւ 4-5 հատ պատահած է. թէեւ վատերու բերնին մէջ աւելի քան ակամայ ընդհարում՝ ցոյց է, որովհետեւ ատ չարախօսութիւններն են որ կը ծառայեցնեն իրենց նենգ և ազգադաւ հաշիւներուն:

Եւ Առաքելոց վանքի ատ ցոյցով Անդրանիկը կուզար ցոյց տալու — հայ ժողովուրդի տառապանքի անհանդուրժելիութիւնը.

Անով Անդրանիկը կուզէր —երկրի ձայնը, յեղափոխութեան ձայնը խառնել Եւրոպայի հայասէրներու բարձրացուցած ձայնին.

Անով յեղափոխութիւնը կ՚ուզէր —իր գոյութիւնը ցոյց տալ և հայ դատը կրկին ուշադրութեան առարկայ ընել տալ.

Ատ քայլով վերջապէս, Անդրանիկը կը պարտաւորեցնէր —թուրք կառավարութիւնը յեղափոխութեան ոտքը դալ. բանակցութեան մտնել իրեն հետ, ճանչցնել մէկ խօսքով թշնամիին —յեղափոխութեան գոյութիւնը. ուժը և հեղինակութիւնը.

Եւ յաջողեցաւ Անդրանիկը. Համբոյր իրեն...

Դառնանք մեզի, արտասահմանցիին.

Ի՞նչ էր ատ միջոցին տիրող հոսանքը. ի՞նչ էր ամբոխին տրամադրութիւնը, հոգեբանութիւնը.

Արտասահմանի ժողովուրդը Պուլկարիայէն մինչեւ Ամերիկա, առանց վայրկեան մը իսկ թափանցելու Անդրանիկի առած քայլին բուն շարժառիթներուն և նպատակին, ան, մի միայն երեւոյթներովը. Անդրանիկի քաջութիւնովն ու յաջողութիւնովը գինովցած, ոգեւորութեան լայն աստիճանի մը մէջ էր.

Ի՛նչ հիացումներ, ի՛նչ պարծանքներ, ի՛նչ օդային կեցցէներ ըսես չէր գար մինչեւ իսկ ամենէն լռկածներէն. Ամէն տեսակի և գոյնի տարրեր միաբերան կ՚ըսէին.

— Է՛ պռավօ, ըսելիք չի կայ, ըննելէն ետքը սանկ ընելու է, տեսա՞ք մի մարդիկը, ափ մը տեղին մէջ, ափ մը քաջերով 1000-է աւելի զօրքը կտրել անցնե՛լ... Մարդիկը գործեն կոր, տղրար, գործեն կոր...

Ու հիացումի, հետաքրքրութեան ալիքները կը քշուէին ասդիէն անդին.

Ասի օրուան դէպքերու տպաւորութենէն ազդուող միամիտ ամբոխին ըզգացումի չափն ու խորհելակերպն էր.

Ի՞նչ էր հայ-Անձէտ Բրիզաններու բանած դերը ատ միջոցին.

«Հայրենիք»ը յեղափոխական մաքուր և խիզախ փիլոփականտա մըն էր որ կը մղէր անդին, Ամերիկայի մէջ. և կը հրաւիրէր բոլոր խօսքի-մարդիկը, պահանջկոտները, գալ, ձեռք-ձեռքի տալ և օգնել Սասունին ու Անդրանիկին.

Եւ այսօրուան «Սասունի մէջ քիչ մարդ ունին եղեր», «Սասունի մէջ քիչ զէնք ունին եղեր» բղաւող և սիամիտները խաբել-շորթելու աշխատող վերակազմեալ ազգասպանները՝ առիթ և նիւթ յուսենալով Առաքելոց վանքի գրաւման դէպքը խմբելու, դատապարտելու և Անդրանիկներն ու անոնց ընկերները «ազգասպան», «ոճրագործ», «անզգամ» անուանելու և միամիտները մոլորեցնելու, ի՞նչ կը պատասխանէին դաշնակցականներու առաջարկին, գիտէ՞ք.

— Է՛հ, աղբար, մինակ Սասունը չէ՞ եա տանջողը, Հայաստանի ամէն կողմն ալ նոյնն է:

Եւ գոնէ հայ-տառապանքի անունով ժողուած՞ գրամնուն ՍԱՆԹԻՄ ՄԸ, աւելի չէ, ՍԱՆԹԻՄ ՄԸ յատկացնէին Սասունէն դուրս Հայաստանի միւս վայրերուն ... սրտերնիս չէր ցաւեր և իրենց ազգասպան դերը գոնէ քիչ մը պզտիկցուցած կըլլային ...

Ատ չի բաւեր, դեռ ելեր էին, ինքնապաշտպանութեան յանձնախումբը քայքայելու, հալածելու, որ երկիրը զէնքի դրամ չի ղրկէ, դեռ ելեր էին «Անդրանիկը «աւազակ» կոչելու և բարեմիտ Ամերիկացիները ինքնապաշտպանութեան յանձնախմբէն հեռացնելու համար ատ մտքով ազդագաւ նամակներ գրելու ...

Եւ աս դաւաճանութիւնը ընողներն են որ Դաշնակցութեան տուած զէնքերը քիչ կը գտնեն, երբ իրենք Մէկ ՀԱՏ չեն տուած և նստած ատ դրամները քըթը՛ր-քըթը՛ր կերած են։ Ոճրագործնե՛ր։

Ադին, Պուլկարիոյ մէջ, անոնց հարազատ եղբայրները, տարբեր տեսարան մը բացած էին և տարբեր դեր կը կատարէին։

Ասոնք ալ, Առաքելոց վանքի գրաւումը խմբելու և Անդրանիկներուն հայհոյելու առիթ չի գտնալով, և կամ, հանգամանքները աննպաստ գտնելով, ամբոխին ոգեւորութեան առջեւ գոնէ իրենց սրտերը պաղչկեցնելու համար ուրիշ պօռու կը չալէին և Վառնայի հայատառ-մէկվէրէթը կը կաղկանձէր։

— Անդրանիկը Դաշնակցական չէ եա՛...

Կը ձգէինք որ Անդրանիկին դաշնակցական ըլլալը օրորոցի տպաքը խոստովանէին, եթէ խնդիրը հոն ըլլար։

Խնդիրը հոն է սակայն որ, Սասունի ներկայ դժբաղդութեան վրայ փարիսեցիական վայոց բարձրացնողները ամբոխին վնասակար կողմերը քօղալերելու աշխատող ազգասպան վատերը ատ միջոցին չի հանեցին նոյն վայնասունը։

Ինչո՞ւ սակայն։

Զէ՞ որ Առաքելոց վանքի գրաւումը ցոյց մը էր, որուն իրենք հակառակ էին, չէ՞ որ. եթէ Սասունին վրայ թուրքը քալեց — որուն թէեւ Սուլթանի ատ ճարտար փաստաբանները չեն հաւատար կամ չեն ուզեր հաւատալ բայց աչքերնին խօթեցինք իրողութիւնները ու դեռ պիտի շարունակենք — չէ՞ որ. կըսես. Սասունին վրայ՝ թուրքը քալեց, իսկ Առաքելոց վանքին վրայ՝ Անդրանիկը ... Ինչո՞ւ ուրեմն ատ պապանձումը։

Պատճառը պարզ է։

Որովհետեւ Թուրքին հաշիւին չեկաւ ատ ատեն կոտորած, կոխ ընել և կոտորած չըրա ... ահա՛ խնդիրը։

Հապա՛ եթէ կոտորած ըլլա՛ր ... այն ատենն էր վնասակարը։ Ըլլալէն ետքը ...։ Եթէ կոտորած ըլլար կըսեմ, պապանձող բերանները ինչե՛ր չէին ըսեր, ի՛նչ հայհոյանքներ չէր թափուեր. ի՛նչ ազգասպան վայնասուններ չէին բարձրանար. Անդրանիկին ալ, Դաշնակցութեան ալ հասցէին. ի՛նչ հիացողներ, ոգեւորուողներ չի պիտի յուսահատէին ...

Ահա՛ ձեզի իրական գոյնն ու ներքին և մտաւոր աշխարհը՝ բոլոր վարկենական ոգեւորող-հիացողներուն, ահա՛ ձեզի օրինակ մը ալ արդասպան վատերու դարշելի պատկերները։

Անդրանիկներն ու Սասունցիները դեռ շա՛տ ջախջախիչ ապտակներ պիտի իջեցնեն ատ վատերու երեսին իրենց կեանքի օրինակովը. թուրքը իր սխթէմաթիկ ոչնչացումի գործով դեռ շա՛տ փաստեր պիտի տայ։

Շարունակենք դեռ քրքրել իրողութիւնները։

Ժիրայր

Ֆիլիպէ

ԵԳԻՊՏԱԿԱՆ

—)o(—

ԴԷՊՔԵՐ ԵՒ ԴԻՄԱՍՏՈՒԵՐՆԵՐ

Դ.

Անորդ. — Այս օրքան շատ են Զաս Բեմի խմբագիրները։

Մենսոր. — Առաւօտ կանուխ կանգնողը, դատարկապորտը, անօթի մնացողը, գործ փնտռողը հոն կը վազէ և գրիչ ձեռք կառնէ։

Ա. — Սա գլուխը տազը ո՞վ է։

Մ. — Հռչակաւորն Ասուպն է։

Ա. — Ի՞նչ կըսե՛ս, այս այն է՞. զարմանալի՛ բան, այս այն չէ՞ որ, բժիշկի քթին չէր հաւնած ...։

Մ. — Ճիշդ այն է, այդ արծաթափա՛յլ գլուխը ...։

Ա. — Մարդուն հաւատալը չի գար կոր, այս մարդը ինքզինքը հայելիին մէջ երբէք տեսած չէ՞. սանկ ցազ գլուխ մը ունենալէ վերջը ի՞նչպէս համարձակեր է ուրիշին քիթը չափչփել. ինքզինքը բանաստեղծ ալ կը կարծէ՝, վա՛յ մեղքիս։

Մ. — Կարծեմ բանաստեղծութիւններուն հաւաքածոն ալ հրատարակած է և խամ թերթերուն կը քշէ իր թրխածները։

Ա. — Գիտե՛մ, Թիֆլիսի Մուրճ Լուսայ հանդէսները անոր բոբիկութիւնը և խախկութիւնը երեւան հաններ էին։

Մ. — Ես չեմ կարդացած այդ հանդէսները, դուք կերեւայ թէ Թիֆլիսէն անցած ժամանակիդ կարդացեր էք։

Ա. — Այո՛, անոնց բաժանորդ ալ գրուած եմ, ահա տեսէ՛ք, Լուսայ 1904 թիւ 3-ին մէջ այդ տղուն համար ի՞նչ կը գրէ։ — Մինչդեռ Բազմավէպը ասում է, թէ տաղաչափական կանոններ չգիտնալը ռուսահայ բանաստեղծների ժենաշնորհն է, ահա և Վ. Տիրանեան (մեր քիչ ասուպ), «տաճկաստանցի անկապած (նոյնիսկ «հոսհոսական տիպէն), ցոյց է տալիս, «թէ տաղաչափական որ աստիճանի «տնհեթեթութիւնների կարելի է հասնել։ Այսպէս նա գրում է օրինակ «հետեւեալ ձեւով՝ «Այգին առաց, «թեքեւորեն ա՝ա ճամբա հին քայլեց «ինկած։»

Կամ՝ Անոնց բնիկ գեղեցկութիւնի «ներքի գիս գոն չիին ձգեր ցիովին»

Թեանը մէջ. «կսաւ խուզարկել զանոնք։ Բայց ի զո՛ւր։ բոլորն ալ պարապ էին։ Խեղճ տղան չուարեցաւ ի՞նչ ընել, ի՞նչ ըսել, ինքզինքը կրնոյ մը, պոռնիկի մը ճիրաններուն մէջ ըլլալը զգաց, ու գիմադրելու, հակառակելու զօրութիւնը, ուժը սպառած գտաւ իր մէջ։ Կինը տիրացած էր իր էութեան, ու գուզէր ճզմել, չարչրկել զինքը, անիկա խաբել յանդգնած ըլլալուն համար...

—Դրամ չունիս հէ՛, դրամ չունի՞ս, խաբեբա՛յ...։

Ու ահաւոր կից մը տալով խեղճին ներս սողոսկեց իր փճացած, պղծուած մարմինը ու դուռը պինտ մը գոցեց Պետրոսին երեսին ...

* *

Թշուառ տղան ահաւոր սարսուռը զգաց ամբողջ ոսկորներուն վրայ. հարուածը՝ որքան անակնկալ՝ նոյնքան սոսկալի էր. շուարած մնաց ան պահ մը. մելամաղձոտ ապուշ հայեացքը դեռ փակ դրան գամած. նայեցա՛ւ, նայեցա՛ւ ան երկար առանց նոյնիսկ ինքզինքը հասկնալու պատճառը։ Երա՞ղ էր արդեօք տեսածը, խորհեցաւ ան, իրականութի՞ւն մը էր արդեօք, որ ինքզինքը հոս այսպէս ուշ ատեն, գիշերին անգութ խաւարին թանձրութեանը մէջ թաղուած, կորսուած՝ օտարին տան առջեւ խենթ, ցնորական ակնկալութիւնը ունեցած էր ապաստանարան մը գտնալու։ Ո՞վ էր այն սոսկալի կինը, որ թունաւոր՝ իր ոձի պաղ ձեռքերով զինք չղթայած, քարշ էր տուած իր ետեւէն առանց իր պիղծ նպատակին իսկութիւնը անոր պարզելու։ Ինչո՞ւ միայն զինք էր ընտրած այն ստուար Լոնտոնի գիշերային թափառական ջղջիկներուն մէջէն, որոնք նոյնպէս իր նման տեսած կեանքի դժնդակ, ահռելի ու կործանարար կողմերը՝ յաւիտենականօրէն դատապարտուած էին մարդկութեան ստուար մասին ցաւի, տառապանքի լուծը լոկ իրենց ուսի վրայ առած տանելու, տանելու անմռունչ։ Ինչո՞ւ համար այդ կինը անոնցմէ մին չէր ընտրած, ուեկած կանգնած էր իր առջեւն, զինք չարչրկելու, իր տառապանքը բազմապատկելու... Ու խեղճ, թափառական տղան պատասխան մը չէր գտած։

Զարարաստիկ սեւամած գիշերը աւելի սկսաւ թանձր մառախուղին տակ տաղտկալի, անհանդուրժելի դառնալ։ Այս ժամուն որքա՞ն զգալի էր երկնքի մը տակ, պակասը հանգի՛ստ մահիճին, անոնց համար, որոնք նոյն իսկ կրնան է՛ն երանութիւն, է՛ն մխիթարական ժամերը ընտրուած էին թափառելո՛վ, թափառելո՛վ անցնել։ Ո՞վ էր զանոնք յաւիտենականօրէն թափառական անհանգիստ, անվերջանալի ճամբաներուն մէջ մխրճողը, ո՞վ էր պատճառը Պետրոսին անվերջանալի, մրոայլ, թանձր գիշերին ահաւորութեան ճիրաններուն մէջ իյնալով՝ Լոնտոնի սարսռազդեցիկ փողոցներուն անկիւնէն անոր անգութ վերջաւորութեանը սպասումի չարչրկումներուն. ո՞վ էր ներմուծողը անոր անփորձ ափերուն մէջ թափառականի հալեցնող, մաշեցնող ցուպը։—Անշուշտ անգութ բաղդին մէկ եղեռնական ապուշ կատակը...։

Ու Պետրոսը անգամ մը եւս սկսաւ քալե՛լ, քալե՛լ։ Ա՛լ դատելու

ՀԱՅ ՓՇՐԱՆՔՆԵՐ

—)o(—

Ա.

ՊԵՏՐՈՍԸ

Աչքերը առաջին անգամ ըլլալով վեր բարձրացուց եւ ուղիղ կնոջ աչքերուն մէջ մխրճեց։ Անզգամ կինը կարծեց հասած ըլլալ իր նպատակին, առիթ՝ բայց Պետրոսին անհասկանալի լեզուով մրմնջեց.

-Պիտի գա՞ս, հոս մօտ է տունս...

Ու բազուկը վեր վերցնելով դէպի աջ մատնանիշ ըրաւ։

Անփորձ, թշուառ տղան երկինքէն իջած բարի հրեշտակ մը կարծեց ան որ ճիշտ ժամանակին հասած՝ կուզէր փրկել զինքը ահաւոր գառոսի ան հետացումի խորխորատներէն։ Ու նոյն բոպէին ուժ՝ քաջութիւն առած ուղիղ կանգնեցաւ իր կարծեցեալ փրկիչին քովիկը։

Կինը ուրախ իր զոհին այսքան դիւրին տիրանալուն, շղթայեց անոր դողդղացող ձեռքը իր ոսկրացած մատներուն մէջ ու սկսաւ քարշտալ անիկայ իր ետեւէն։

Հազիւ հինգ վայրկեան առաջացած էին, երբ կինը կանգ առաւ նեխած՝ ու գարշահոտ տան մը առջեւ, ու ձեռքը գրպանը խոթելով դրան բանալին դուրս հանեց։ Պետրոս սարսափի ու հրճուանքի ազդեցութենէն խենդեցած՝ նոյն իսկ դեռ չէր ուզեր հաւատալ իր աչքերուն։ «Միթէ կարելի՞ է», կը խորհէր ան, «որ այս կինը անծանօթ մը ըլլալով ինծի այս տեսակ բարեացակամութիւն մը ցոյց տայ ինծի, ձրի զիս իր տունը տանի, հիւրասիրելու, ուտելիք տայ, պառկելիք տեղ ապահովէ»... Բայց այս մտածումը շատ չի տեւեց, կինը ո՞վ գիտէ իր սովորականին համեմատ, դուռը բանալէն վերջ՝ ձեռքը Պետրոսին երկարեց ու վստահ շեշտով մը՝

—Նախ դրամը, ըսաւ, կրկին պետրոսին անհասկանալի լեզուովը, կը հասկնամ քիչ մը կոշտ կերեւի քեզի այս ընթացքս, բայց ի՞նչ ընենք մեր «օրէնքը» այս է։

Կարծելով թէ նախնական զգուշութիւն մըն որ կընէ կինը, գլուխը երերցուց, երախտապարտի անմեղ շարժումով, ինչպէս իր սրտի անհուն ու անբացատրելի շնորհակալութեան Ու միեւնոյն ժամանակ կինն ալ կարծելով թէ համաձայնած է ան իր առաջարկին անո՛ւշ դրամին ժամանելուն սպասեց. բայց դրամը չի հասաւ։

Ու պահ մը երկուքը միասին իրարու երես նայեցան իրար ճշգրտորէն հասկնալու փափաքով։ Պետրոսին սիրտը կասկած մը ծագեցաւ անմիջապէս, ու նմանապէս կինը կատակ մը կարծեց Պետրոսին իրեն հանդէպ բռնած ընթացքը ու բնական զայրոյթ մը զգաց իր անյաջողութիւնը նախատեսելով։

—Առա՛ջ դրամը, պոռթկաց. ձեռքը աւելի մօտը երկարելով։

Այս անգամ Պետրոս գուշակեց իրականութենէն մաս մը, ու ազաչողական կերպով կնոջ երեսը նայելով առանց խօսելու ուզեց իրեն սնանկ ըլլալը հասկցնել անոր, որը անշուշտ կինը դարձեալ կատակ մը կարծեց, ու ձեռքը սահեցնելով անոր պատատած գրպաններուն պարապութեան մէջ. «կսաւ խուզարկել զանոնք։ Բայց ի զո՛ւր։ բոլորն ալ պարապ էին։ Խեղճ տղան չուարեցաւ ի՞նչ ընել, ի՞նչ ըսել, ինքզինքը կրնոյ մը, պոռնիկի մը ճիրաններուն մէջ ըլլալը զգաց, ու գիմադրելու, հակառակելու զօրութիւնը, ուժը սպառած գտաւ իր մէջ։ Կինը տիրացած էր իր էութեան, ու գուզէր ճզմել, չարչրկել զինքը, անիկա խաբել յանդգնած ըլլալուն համար...

—Դրամ չունիս հէ՛, դրամ չունի՞ս, խաբեբա՛յ...։

Ու ահաւոր կից մը տալով խեղճին ներս սողոսկեց իր փճացած, պղծուած մարմինը ու դուռը պինտ մը գոցեց Պետրոսին երեսին ...

* *

Թշուառ տղան ահաւոր սարսուռը զգաց ամբողջ ոսկորներուն վրայ. հարուածը՝ որքան անակնկալ՝ նոյնքան սոսկալի էր. շուարած մնաց ան պահ մը. մելամաղձոտ ապուշ հայեացքը դեռ փակ դրան գամած. նայեցա՛ւ, նայեցա՛ւ ան երկար առանց նոյնիսկ ինքզինքը հասկնալու պատճառը։ Երա՞ղ էր արդեօք տեսածը, խորհեցաւ ան, իրականութի՞ւն մը էր արդեօք, որ ինքզինքը հոս այսպէս ուշ ատեն, գիշերին անգութ խաւարին թանձրութեանը մէջ թաղուած, կորսուած՝ օտարին տան առջեւ խենթ, ցնորական ակնկալութիւնը ունեցած էր ապաստանարան մը գտնալու։ Ո՞վ էր այն սոսկալի կինը, որ թունաւոր՝ իր ոձի պաղ ձեռքերով զինք չղթայած, քարշ էր տուած իր ետեւէն առանց իր պիղծ նպատակին իսկութիւնը անոր պարզելու։ Ինչո՞ւ միայն զինք էր ընտրած այն ստուար Լոնտոնի գիշերային թափառական ջղջիկներուն մէջէն, որոնք նոյնպէս իր նման տեսած կեանքի դժնդակ, ահռելի ու կործանարար կողմերը՝ յաւիտենականօրէն դատապարտուած էին մարդկութեան ստուար մասին ցաւի, տառապանքի լուծը լոկ իրենց ուսի վրայ առած տանելու, տանելու անմռունչ։ Ինչո՞ւ համար այդ կինը անոնցմէ մին չէր ընտրած, ուեկած կանգնած էր իր առջեւն, զինք չարչրկելու, իր տառապանքը բազմապատկելու... Ու խեղճ, թափառական տղան պատասխան մը չէր գտած։

Զարարաստիկ սեւամած գիշերը աւելի սկսաւ թանձր մառախուղին տակ տաղտկալի, անհանդուրժելի դառնալ։ Այս ժամուն որքա՞ն զգալի էր երկնքի մը տակ, պակասը հանգի՛ստ մահիճին, անոնց համար, որոնք նոյն իսկ կրնան է՛ն երանութիւն, է՛ն մխիթարական ժամերը ընտրուած էին թափառելո՛վ, թափառելո՛վ անցնել։ Ո՞վ էր զանոնք յաւիտենականօրէն թափառական անհանգիստ, անվերջանալի ճամբաներուն մէջ մխրճողը, ո՞վ էր պատճառը Պետրոսին անվերջանալի, մրոայլ, թանձր գիշերին ահաւորութեան ճիրաններուն մէջ իյնալով՝ Լոնտոնի սարսռազդեցիկ փողոցներուն անկիւնէն անոր անգութ վերջաւորութեանը սպասումի չարչրկումներուն. ո՞վ էր ներմուծողը անոր անփորձ ափերուն մէջ թափառականի հալեցնող, մաշեցնող ցուպը։—Անշուշտ անգութ բաղդին մէկ եղեռնական ապուշ կատակը...։

Ու Պետրոսը անգամ մը եւս սկսաւ քալե՛լ, քալե՛լ։ Ա՛լ դատելու

«Թէ հինը և թէ չհինը անկարելի է բաժանել իրանց գոյականներից և անկախօրէն նոր տողի սկզբում առանց այդ բայերի—նախընթաց բառերի «չարքը ուղղակի անմտութիւն է, իսկ ամբողջ այդ ձևը—անճեթեթութիւն»

«Սերեւի Պօլսում սովորութիւն կայ այդ տեսակ ձևով բանաբարել բանաձևութիւնը», որով ծաղրի առարկայ «է հինել և Պարոնեանը»:

Մ.—Զարմանալի՛ բան, մենք ալ կը կարծէինք թէ իրաւ բանաստեղծ է այդ «նազելիմ» տաղը:

Ա.—Աստնդպէտները կը կարծեն թէ տողերը իրարու տակ շարելով և ոտանաւորի ձևը տալով բանաստեղծ կըլլա՛ն։

Մ.—Մինչև իսկ բժիշկին հետ վիճաբանելու ժամանակ ոտանաւոր պատասխանած է ....

Ա.—Այդ իր իրաւունքն է, քանի որ հայ ծաղրիկութեան Բանթէոնին անօրէնն է, պաշտօն մը. որուն արժանի համարած են գինքը իր մուսաները։

Մ.—Ի՞նչպէս, այդ չէի լսեր։

Ա.—Ես ալ չէի գիտեր, բայց Աղաս Բեմի ի՞ն 1–ին իմացայ, որ այդ պաշտօնը ունի և մարհակ կամ մոմից տամակ տուողը ինքն է։

Ֆօթօկրաֆ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կարծեմ 886 թւին, Պոլսոյ «Հայրենիք» թերթը մի քանի ամիս իբրև օրաթերթ հրատարակուեցաւ Մարկոս Աղաբէկեանցի խմբագրութեամբ. այդ ժամանակ Պոլսոյ հոսու-

Ներու վրայ գրած մէկ վէպս՝ Կ. Փաշաեանի ստորագրութեամբ եւ «Միչել եւ Ֆլիգին» վերտառութեամբ՝ տրպուած է անոր մէջ, գրաւելով չորս թերթերու բանասիրական բաժինը։ Արդ. ո՞վ որ այդ թիւերը գտնելով ինձ գրէ, անոր կը նուիրեմ մէկ տարեկան «Շարժում» եւ կանխօրէն շնորհակալութիւնս։

Տօքթ. Կ. Փաշայեան

Հասցէ՝

Տր. Բաշայեան, Ալեքսանտրի (Եգիպտոս)

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ «ՄԻՈՒԹԻՒՆ»

(Շրջաբերական նամակ)

Ընկերներ,

Ներկայ թւի համագումարը, որ չը կայացաւ իր սովորական ժամանակին, տեղի պիտի ունենայ ինչպէս յայտնուած է նախորդ շրջաբերականով, սեպտեմբերի 25–30ին Ցիւրիխ։

Այդ առիթով խնդրում ենք բոլոր տեղական մարմիններին՝

Ա.—Շուտով ժողով գումարել, ընտրել պատգամաւորներ (Կանոնագրութեան յօդ. 10) և մեզ տեղեկացնել ընտրութեան արդիւնքը։

Բ.—Հաղորդել՝ համագումարին դասախօսել ցանկացողների անունները, նոյնպէս և դասախօսութեան նիւթը (յօդ. 18)։

Գ.—Ուղարկել այն հարցերի ցանկը, որ տեղական մարմինները կամենում են ենթարկել Համագումարի քննութեան,

Դ.—Ցուցակագրել բոլոր անդամներին, և ստանալով անդամավճարները՝ հին ապառիկների հետ միասին՝ հասցնել Կարգադիր Ցանձնաժողովին։

Ե.—Պատրաստել վիճակագրական տեղեկութիւններ, Տեղեկագրի մէջ մտցնելու համար (յօդ. 23)։

Այդ բոլորը խնդրում ենք կատարել ոչ ուշ քան սեպտեմբերի 1-ը։ Այլապէս մենք հնար և միջոց չենք ունենայ բոլոր հարկաւոր նախապատրաստութիւնները տեսնելու՝ առաջիկայ ժողովի համար։

Ծանօթ.—Շատ տեղերից առաջարկ ստացանք Համագումարը հրաւիրել Ժնեւայ արձակուրդներին, երբ ուսանողները ցրւած չեն լինում և Ցիւրիխի փոխարէն՝ ընտրել Պարիզ քաղաքը։ Չկամենալով մեզ վրայ առնել պատասխանատւութիւնը, մենք վճռեցինք հրատարակել ներկայ շրջաբերականը, թողնելով խնդրի որոշումը ուսանողական խմբերի հայեցողութեան։

Ծանօթ.—Լոյս տեսաւ «Միութեան» 17-րդ հրատարակութիւնը՝ «Սասուն» և Սասունի քարտէզը, ֆրանսերէն։

Ընկերական բարեւներով

Լիազօր Կօմիտէ

Կարգադիր Ցանձնաժողով

1904, օգոստ. 15 ԺՆԵՎ

Հասցէ՝

Adresse: Union des Etudiants Arméniens de l'Europe, rue de l'Ecole-de-Chimie, 2, Genève Suisse

—❁❁—

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Շարժում լրագրի Ցայգեղի խմբագրութեան Վառնայում

Հաֆրվա՝ գիւղի «Դրասիրաց» ընկերութեան գրադարանի վարչութիւնը, նախապէս ներողութիւն խնդրելով յարգելի խմբագրութիւնից, որ գրադարանի նախկին վարչութիւնը, ներքին ինչ, ինչ պատճառներով մինչև այսօր չի կարողացել գրել Ձեզ շնորհակալական նամակ, սրանով իր խորին շնորհակալութիւնն է յայտնում խմբագրութեանդ բարեհաճ պատրաստակամութեան համար, որ այս մի քանի տարիներ շարունակաբար, ինչպէս և այս տարի, ձրիաբար ուղարկում էք «Շարժում» այստեղի գրադարանին, որով նպաստում էք մեր կրթութեան կարօտ երիտասարդութեան մտաւոր զարգացման և կրթութեան գործին։ Ցայտնում ենք մեր ամենաջերմ ցանկութիւնները՝ «Շարժումի» բարգաւաճման, առաջդիմութեան և լայն ժողովրդականութիւն ստանալու համար։

Ընդունեցէք խնդրեմք, մեր խոնարհ և խորին յարգանքները։ Կրկին շնորհակալութիւն։

Վարչութիւն Գրադարանի

Նխգ. Ցակոբ Սահակեան

Դանձ. Մեսրոպ Ծ. Աւագեան

Քարտ. Ա. Գպշեան

Գրապ. Ա. Մ. Ղազարեան

Խորհրդ. — — —

վճռելու կարողութիւնը խոյս էր տըւած իրմէ։ Կը քալէր, բայց հակառակ իր սրունքներու անվերջ բողոքին. կը քալէր ան, մէկէտ, քայլերը կը տատամսէին իր ոսկորներուն զողզողի ազդեցութենէն գինովցած, կը քալէր ան, բայց ինք ալ չէր գիտեր թէ կը յառաջանա՞ր, իր նպատակակէտին հասնելու գաղափար մը յոյս մը ունէ՞ր. եւ կամ գիտէ՞ր թէ ուր էր որ կերթար, կը քալէ՛ր...:

Աեղծը բոլորովին չուարած էր։

Ու պահ մը վերջը, ինկաւ, գըլորեցաւ պողոտային անկիւնը ու ակամայ փակեց աչքերը ու մոռցաւ ամէն ինչ։

⁂

Բայց իր ճակատագիրը անողոք էր սեւ էր. դեռ չարչրկումներուն վերջը չէր հասած. դեռ գուցէ հանգստի գոնէ մի քանի վայրկեաններուն իսկ չէր արժանացած։ Ու հինգ վայրկեան չէ տեւած ոստիկան մը մօտեցաւ իրեն, ու իր կօշտ կօշիկներուն ծայրով սկսաւ հրրուածել խեղճը։ Պետրոսը կրկին աչքերը բացաւ ու իր գլուած տեղէն վեր բարձրացուց իր ծանրացած, յոգնած աչքերը։

—Ելի՛ր, գոռաց ոստիկանը, վեր բարձրացնելով գինքը օձիքէն բռնած, հոս քնանալու տեղ չէ, կորի՛ր անամօթ, թափառական, աղտոտ օտարական, գնա՛, կորսուէ հոսկէ։

Ու բոլոր զօրութեամբը հրեց թըշուառ տղան մութին ա՛գուէ ճիրաններուն մէջ, ու դարձեալ շարունակեց իր քայլերը տանիքներուն ընաուերներուն տակ ապաստան գտնող ուրիշ որսեր գտնալու....

Մինակ մնացած կրկին, Պետրոսը անհաւոր սարսուռ մը զգած կրկին։ Քալէ՛ց, քալեց դարձեալ թափառական հրէային անվերջ թափառումով, առանց ո՞ւր երթալը, ի՞նչ ընելը զգալու։ Բայց անգամ մը եւս սրբունքները ընդվզեցին իր դէմ, ու ան անկարող շարժելու անկարող իր էութիւնը պողոտային վրայ տարածելու, անկարող բողոքելու անգութ, ոճրագործ իրականութեան դէմ, ընկաւ տղու մը նման արտասուել։ Ու արտասուքներուն է՛ն աղին, էն թունալիցը սկսան քամուիլ իր այտերէն վար։ Լացաւ խեղճ տղան, լացաւ երկար առանց նոյնիսկ հասկնալու թէ ինչո՞ւ։ Բայց լացը փոխանակ գինքը անդորրացնելու, արտասուքը փոխանակ խաղաղեցնելու իր ներքին ովկէան դարձած ալեկոծումը աւելի վառեց, բորբոքեց ներքին կրակը։ Ցաւը, տառապանքը աւելի ու աւելի լայնցաւ, մեծցաւ իր աչքին առջեւ, ու վերջապէս գիտցաւ, զգաց իր անտէր, անօգնական կացութիւնը։ Ի՞նչ ընել... խորհեցաւ ան իր արտասուքի հեղեղներուն մէջ, ու պատասխանը որ չի կարողացաւ գտնել, գինք աւելի սարսռացուց. սիրտը աւելի խստօրէն փղձկեցաւ, ու դարձեալ արտասուեց. լացա՛ւ երկա՛ր...

Այդ մթութեան անհաւորութեանը մէջ անուշի՛կ մօրկանը անցեալ երջանիկ խնամքները յիշեց, միտքը ինկաւ այդ բոպէին մայրենի անդորր օճախը, ուր իր մանկութեան ու դեռատի երիտասարդութեան երջանի՛կ ժամանակը անցուցած էր, առանց ցաւի տառապանքի ու վիշտի։ Դառն խիստ դառն կսկիծով մտաբերեց այն դրախտային ժամը, զորս անցուցած էր իր սիրականին հետ վրաններուն քով, ծառերու խառնութեան մէջ, հեռո՛ւ չարաճճի գիտող աչքերէ։ Ա՛խ, այն վայրկեանները, երբ քով քովի նստած, լուռ. մունջ երջանիկ իրարու ներկայութիւնը զգալէն, կը դժուարանային իրար փոխանակելու բառեր գտնալէն։ Ա՛խ. այն ամօթխած մի քանի համբոյրները, որոնց յիշատակումը այժմ կայրէր իր շրթունքները, կարծես կրակ դարցած, Ո՞ւր էին այդ վայրկեանները այժմ, ո՞ւր էին անոնք եւ ի՞նքը ո՛ւր... Դեռ հազիւ տարի մը առաջ անոնց անուշ ներկայութիւնը վայելած պահուն՝ նոյն իսկ բաժանումի վրայ խորհած չունէր, ու այսօր սարսռալի ճակատագրին ձեռքը խաղալիկ դարձած անոնցմէ հեռո՛ւ, հեռո՛ւ, աշխարհին միւս ծայրն էր նետուած...

Ու իր դրութեան ամբողջ իրականութիւնը անցեալի պատկերին հետ մէկտեղ աչքին բերելով, անգամ մը եւս սկսաւ արտասուել, արտասուել, անիծելով կեանք կոչուած չարաճճի առեղծուածը։ Անտէր, անօգնական իր վայրկեաններուն մէջ վեր նայեցաւ վեր, դէպի անհուն երկնակամարները, հոն իր թշուառութիւնը, տառապանքը դիտող մը գտնալով գթութիւն հայցելու անկէ։ «Ո՞ւր է Աստուած, ո՞ւր, եւ ինչո՞ւ չի տեսնար զիս», արդեօք ա՞ն ալ այժմ իր քնոյ հանգստեան մէջ է, ա՞ն ալ այս տեղի մարդոց նման է» խորհեցաւ պահ մը, ու կեանքն ալ անիծեց Աստուածն ալ, որ այսքան չարիք եւ թշուառութիւն ստեղծագործած էր...:

Վերջապէս արշալոյսը սկսաւ շառագունիլ, պահ մը վերջը անգամ մը եւս կեանքը իր սովորական եռուզեռումին, պայքարին մէջ մտաւ։ Առաւօտ եղած էր կրկին։ Կաղզուրուած մարդը սկսած էր դէպի իր օրուայ մեքենայական աշխատութիւնը։ Անօթի, ծարաւ, քնատ ու յոգնած Պետրոսը սկսաւ ապուշ դիտողի դերը կատարել, յնորական սպասումը ունենալով մէկուն՝ որ գար ու զինք իր ինկած, կորսուած քառսէն վեր բարձրացնէր։ Բայց չեկաւ, չի հասաւ այդ փրկիչը։

Ու երեք օր շարունա՛կ թափառեցաւ ան միօրինակ կերպով, թափառեցա՛ւ անդադար, անօթի. ծարաւ, յոգնած ու քայքայուած...

⁂

Եւ երեկնամուտին ատեն, իր Լոնտոն իյնալուն երրորդ օրը, հայու մը առջեւ կանգնած, իր մաշած մարմինը ու գունատ դէմքը պատին կըռթնցուցած այսպէս կը խօսէր ան.

—Պիտի երթամ, պիտի կորսուիմ սա անիծեալ տեղէն։

—Ո՞ւր պիտի երթաս։

—Հնդկաստան, հեռո՛ւ, հեռո՛ւ այս տեղերէն..

—Բայց ի՞նչպէս, հապա ճանապարհի դրա՞մ չունիս։

—Զրի պիտի տանին զիս, ան պայմանաւ որ աշխատիմ նաւուն մէջ։

⁂

Ու իր Լոնտոն գալուն չորրորդ օրը մեկնած էր դէպի՛... Հնդկաստան. ո՞վ գիտէ ալ չի վերադառնալու գուցէ։ Ու թող սպասէ իր անմխիթար մայրը. թող չարչրկուի սպասումով իր սիրական Փերուզը յուսալով որ օր մը վայելումը պիտի ունենան իրենց սիրականին վերադարձին...։

Բայց պիտի վերադառնա՞յ արդեօք Պետրոսը...։

Անդիրան

Լոնտոն

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ ԳՐԱՖ ԳՈԼՈՒԽՈՎՍԿՈՒ ՀԵՏ

Այս օրերս «Մոսկովսկայա վեդոմոստի» Վիեննայի թղթակիցը գրաֆ Գոլուխովսկու հետ Պալքանի գործերու մասին երկար տեսակցութիւն մըն է ունեցած, ուր նախարարը հետեւեալն է ըսեր՝

— «Մակեդոնիոյ մէջ ամենատանգուն կերպով կաշխատինք, սակայն դեռ հսկայական աշխատանքներ կը մնան: Գործը այն բանով կը դժուարանայ՝ որ այս աշխատանքի համար քաղաքական երկու գործակալները չեն բաւեր։ Որովհետեւ ո՛չ թուրքական և ոչ ալ տեղական տեղեկագրերուն հաւատալ կարելի չէ, ուստի քաղաքական գործակալները պէտք է, որ իրենք երկրի մէջ ճամբորդութիւններ ընեն, իսկ այդ բանի համար երկուքը շատ քիչ է։ Պէտք է որ քաղաքական գործակալները բազմապատկուին և անոնց օգնականներ տրուին, որպէսզի աշխատանքը թեթեւնայ։ Այս բարենորոգումը այն ատեն պէտք է մտցուի, երբ Մակեդոնիոյ մէջ ոստիկան-զինուորներու սպաներու թիւը աւելցուած է։ Աւստրո-Հունգարական բարենորոգչական գործի Եւրոպայի և Պալքանի հակառակորդները միշտ կը յամառին թէ՝ Միւրցստեկի ծրագիրը ֆիասկո-ի է հաւասարուած և անոր հետեւանքը զերօի հաւասար է։ Բայց այս չ՚ապացուցուիր։ Մենք կրնանք արդէն այսօր յաջող հետեւանքներու վըրայ մատնանիշ ընել։ Կարճ ժամանակէն քաղաքական երկու գործակալներու պաշտօնական տեղեկագրերը՝ փաստերով կըցուած՝ հրատարակուելին պիտի, և պէտք է տեսնուի թէ՝ անոնց գործունէութիւնը որքան որ խաղաղ, այնքան ալ յաջող եղած»—։

Թղթակցի այն հարցին թէ՝ բարենորոգումներ պահանջող պետութիւնները ոստիկան-զինուորներու յաւելումը պիտի կրնա՞ն գլուխ բերել, Նախարարը ասոր վրայ պատասխանեց՝

— «Այդ բանը գիւրին չը պիտի ըլլայ։ Թիւրքիան անտարակոյս նորէն դժուարութիւններ պիտի յարուցանէ, սակայն վերջապէս մենք պիտի յաջողինք։ Բոլոր մեծ պետութիւնները այն կէտի մէջ համաձայն են, և արդէն սպաներու թիւը որոշուած է թէ՝ ամէն մէկ մեծ-պետութեան կողմէ քանի սպայ պէտք է աւելնան։ Այսպէս կարելի է բաժնել. Աւստրո-Հունգարիա 6, Ռուսաստան 5, Ֆրանսա 3, Անգլիա 1 և Իտալիա 3 սպաներ»—։

Թղթակիցը.— Աւստրիական սպաներու գործառնութիւնը մինչեւ այժմ կը սահմանափակուի Իւսկիւպի սանճաքով։ Սերպիական շրջաններու մէջ սակայն յոյս ունէին թէ՝ անոնց գործունէութիւնը պէտք է տարածուէր նաեւ հին-Սերպիայի վրայ եւս։

Նախարարը.— Այդ բանը չը պիտի պատահի։ Մենք մեզ համար սահմանուած շրջանէն դուրս չը պէտք է ելլանք։

Թղթակիցը.— Ձերդ վեհափառութիւնը կարելի՞ կը համարէ թէ՝ Մակեդոնիոյ մէջ շարժումներ առաջ գան։

Նախարարը. Ո՞վ կրնայ այս գիտնալ։ Անիշխանական մասնակի ցոյցերէն դուրս առ այժմ Մակեդոնիի մէջ ըստ երեւոյթին խաղաղութիւն կը տիրէ։ Պուլկարական և սերպիական յեղափոխականներու գլխաւորները Վիեննայի պաշտօնական շրջաններուն յայտարարեր են թէ՝ իրենք բոլոր շարժումներէն հեռու կը մնան, չեն կրնար միայն պատասխանատու ըլլալ ատգակութիւններու նկատմամբ և թէ՝ ապագային ալ որ և է շարժում առաջ չը պէտք է գայ։ Մենք կը ցաւինք սակայն հաստատելու թէ՝ իրականութիւնը այս վստահացումներուն հետ չը համաձայնուիր։

Թղթակիցը.— Ի՞նչ վիճակի մէջ է սլաւ երկիրներու պալքանեան դաշնակցութեան ծրագիրը։

Նախարարը.— Սոֆիայէն մեր ստացած տեղեկութիւններուն նայելով՝ այս մաքի իրագործումը լաւ ճանապարհի վրայ է։ Բայց նոյնիսկ այս դաշնակցութեան իրականացումէն յետոյ ալ, անոր առանձին կարեւորութիւն չը պէտք է տանք։ Պալքանեան երկիրները որքան քիչ վէճեր ունենան, որքան մեծ ըլլան անոնց օգնութիւնն ու հայեցակէտներու համաձայնութիւնը, այնքան ալ ապահով կերպով մենք մեր նպատակին կը հասնինք՝ «պալքանի մէջ խաղաղութիւնը պահելու»։ Պելկրատի մէջ կը հաւտան թէ՝ պալքանեան դաշնակցութիւնը ռուսական պաշտպանութեանը պիտի փոխարինէ, որու վրայ, շնորհիւ ռուս-ճարոնական պատերազմի հետեւանքներով, այլեւս չեն կրնար հաշուել։ Պալքանեան իշխանութիւնները իրենք զիրենք կղզիացած կզգան Ռուսաստանէն, և այս դաշնակցութիւնը իրենց համար պատնէշ պիտի ըլլայ Աւստրիայի պալքանի վրայ յարձակման պարագային։ Այս սակայն բոլորովին սխալ կարծիք մըն է, և որ թերթերու մէջ յաճախ կարծարծուի, բայց ես կրնամ յայտարարել թէ՝ «մեր միապետութիւնը չը մտածեր Մակեդոնիան գրաւել»։ Այս պատճառով բոլոր այդ կարգի լուրերը ստայօդ են։ Ասոր հակառակ կատաղի պայքար մը կը մղուի Պուլկարիոյ և Սերպիոյ մէջ, ասոնցմէ ամէն մէկը կուզէ իր կողմը գրաւել Մակեդոնացիներու մեծամասնութիւնը, և որու համար ոչ մէկ միջոց չի խնայուիր։ Սակայն՝ այս իշխանութիւնները չը պէտք է մոռնան թէ՝ իրենք արջի կաշուի մը համար կը կռուին, որ ո՛չ մէկին կը պատկանի։

Ն. Ֆ. Պ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՄԱԿԵԴՈՆԱՑԻՔ

Սոֆիայէն կը հեռագրեն Ն. Ֆ. Պ.ին, — «Մակեդոնական շարժումները հայկական անոյ, ապստամբութեանը հսկայական շահագրգռութեամբ մը կը հետեւին։ Կը հաշուեն թէ՝ Հայաստանի մէջ ընդհանուր ապստամբութիւն մը պիտի քաջալերէ Մակեդոնական կոմիտէները, օրինակ երբ Սուլթանը ստիպուած ըլլայ թիւրքական սահմանէն զօրանդներ պակսեցնել,

Անդրանիկ եւ Պիթլիսի անգլիական հիւպատոսը

Կ. Պոլսէն կը հաղորդեն Վիեննա թէ՝ հայ ապստամբապետ Անդրանիկը նամակ մըն է գրեր Պիթլիսի անգլիական հիւպատոսին, նախազգուշացնելով որ նոր ապստամբութիւններ պիտի ըլլան։

ԹՈՒՐՔԻԱ

Հեռագիրները կը հաղորդեն երկար տարիներէ ի վեր իր պալատին մէջ բանտարկուած Սուլթան Մուրատի մահը։ Այդ բնական կամ անբնական մահը բանտարկուած Սուլթանի, անտարակոյս անհուն ուրախութեամբ կը լեցնէ Մեծ Մարդասպան գահակալ եղբօր սիրտը, որովհետեւ այդ մահով ան կազատի շարունակ սպառնացող վըտանգէ մը։

ՌՈՒՍԻԱ

Մերվ քաղաքը յայտարարուած է պաշտօնապէս որպէս համաճարակէ վարակուած։

ՃԱՊՈՆԻԱ

Կառավարական երկրաչափները քններ են մօտերս գտնուած ոսկու հանքերը Իվաթի մէջ։ Անոնք կը հաստատեցնեն թէ՝ այս ոսկեհանքերը հարիւր միլիոն ոսկի ստերլինգ կրնան տալ, հաշուելով տարեկան երեսուն միլիոն եէն։

Կառավարութիւնը յայտարարեր է այդ ոսկեհանքերը որպէս պետութեան բացարձակ սեփականութիւն։

«Թան»

ՌՈՒՍ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Քանի մը օրերէ ի վեր արդէն կռիւը սկսեր է և կը շարունակուի Լիաօեանկի առաջ։ Ն. Ֆ. Պ.ի կարծիքով, այդ ո՛չ թէ այն բաղձացուած վճռական ճակատամարտն է, որ կը մղուի, այլ հետեւանք Կուրոպատկինի դէպի Մուկտէն, և թերեւս, դէպի Խարպին նահանջին։ Քուրոքին որ անկասկած է թէ՝ հռչակաւոր ռազմագէտ մըն է, մինչեւ ս մղուելիք Լիաօեանկի վճռական ճակատամարտի յաղթանակի մասին ապահով չըլլար, յարձակողական քայլ մը չը պիտի առնէր։ Առայժմ պարզ ըլլալով այն թէ՝ ռուսները Լիաօեանկէն դէպի Մուքտէն կը փախչին իրենց պաշարով, ռազմամթերքով և գլխաւոր բանակով, Քուրոքին ըստիպուած է իր ուժեղ յարձակումներով արգիլել կամ գոնէ կզալապէս խանգարել այդ նահանջը։

Այս բանի համար ճարոնացիք ամէ՛ն բան զոհելու են։ Կեանքը, որ ամէնէն թանգն է ճարոնական զօրքերուն հրամայուած է զոհել նոյնիսկ գերութեան մէջ, որովհետեւ ինչպէս զինուորական խորհուրդը յայտարարեր է, ճարոնական զինուորին հայրենիք վերադառնալ չը կայ։ Եւ ինչպէս հեռագիրները կը հաղորդեն, ճարոնական այդ կուռ վճռականութիւնը հրաշքներ կը գործէ։

ՀԱՅԿԱԶԵԱՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԿՐԹԱՐԱՆ

Կրթարանս իր Զրդ. Տարեշրջանը կըսկսի յառաջիկայ Սեպտեմբեր 2-ին հինգշաբթի օր։ Այս տարի տասը գիշերօթիկներու համար միայն տեղ ունինք։ Պայմաններու մասին հաճեցէք դիմել Տնօրէնին։

Հայկ Ե. Եարտըմեան
ՖԻԼԻՊԷ

ՆՕԹԱՑՈՂ ՔԱՌԱՁԱՅՆ ԵՐԳԵՐ
(վիմատիպ)

Ֆիլիպէի Երգեցիկ-Թատր խումբը իր ունեցած պատրաստի երգերուն վրայ աւելցուցած է նորեր։

Գիները շատ աժան։

Ամեն տեղի երգեցիկ խումբի անդամներու համար մէկ երեսը 5 սանթիմ: Ուրիշ գնողներու համար երեսը 10 սանթիմ: Ծամբու ծախքը գնողներուն վրայ։

Վարչութիւն
Ֆիլիպէի Երգ-Թատր. երկսեռ խմբի
(ԿՆիՖ)

Հասցէ՝
Mr. Ervant Aladjadjian
Philippopolie (Bulgarie)

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница „Взаимность“ Варна